ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- -------- 2021 թվականի №---Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի հուլիսի 18-ի «Անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №273Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրվել է ռադիոհաճախա-կանության օգտագործման №1002 թույլտվությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,075 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար, (մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար),

գ) անհատ ձեռնարկատերը չի վճարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 5-ի №ՍԾ/34.2-Մ2-9/4209-2020, 2021 թվականի հունվարի 11-ի №ՍԾ/34.2-Մ2-9/27-2021 և ապրիլի 2-ի №ՍԾ/34.2-Մ2-9/1026-2021 գրություններով,

դ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից Օրենքի 17.1 հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականության օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2021 թվականի ապրիլի 8-ին Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2021 թվականի ապրիլի 8-ի №ԳԲ/34.2-Մ2-9/1107-2021 գրությամբ,

ե) անհատ ձեռնարկատերը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ անհատ ձեռնարկատերը խախտել է Օրենքի 17.1 հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման պարտավորությունը, որը 2021 թվականի մայիսի 5-ի դրությամբ կազմում է 359 091 (երեք հարյուր հիսունինը հազար իննսունմեկ) դրամ, որից 60 135 (վաթսուն հազար հարյուր երեսունհինգ) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ մինչև 2018 թվականի մարտի 7-ը) և 298 956 (երկու հարյուր իննսունութ հազար ինը հարյուր հիսունվեց) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ 2018 թվականի մարտի 8-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 24-ը) առկա է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումարի փոխանցումը պարտավորեցնելու մասին Հանձնաժողովի համապատասխանաբար 2018 թվականի մարտի 7-ի №73Ա և 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №499Ա որոշումները, որոնք գտնվում են հարկադիր կատարման փուլում,

է) 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման՝ անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունը կազմում է 396 750 (երեք հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամ, որից 300 000 (երեք հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 96 750 (իննսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1 հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման №1002 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ը հաշվարկված 396 750 (երեք հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամ պարտքը, որից 300 000 (երեք հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 96 750 (իննսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատերն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2021թ.